ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԿԵՐՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
с.ГЕХАКЕРТ

Գեղակերտի համայնքապետարան հեռ. 093250663 ,
Село Гехакерт тел. 093250663 ,

N 24

« 01 » «փետրվարի » 2017թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Ա. Ղահրամանյանին

Մեծարգո պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի ղեկավարի 2017թվականի հունվար ամսին ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր 5 էջ:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.56/1776-17
03 02 2017 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

<<10>> հունվարի 2017թ. N 01

### ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի N22-Ն որոշմամբ, 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություններին նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

*որոշում եմ՝*

1. Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2017 թվականի հունվարի 10
Գեղակերտ համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Գեղակերտ համայնքի ղեկավարի 2017 թվականի
հունվարի 10-ի N 01 որոշման

# ՑԱՆԿ
## 2017 թվականի ապրիլի 02-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցության դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող տրամադրվող դահլիճների

Արմավիրի մարզ Գեղակերտ համայնք

| հ/հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | դպրոցի դահլիճ | Մ.Մաշտոցի 22 | 200 | ըստ օրենքով սահմանված կարգի | Ա. Ահարոնյան | այլ դահլիճի բացակայություն |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

<<18>> հունվարի 2017թ. N02

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գեղակերտ համայնքի Ա. Իսահակյան 22 տան բնակիչ Անուշավան Արարատի Սարգսյանը դիմել է Գեղակերտի համայնքապետարան իրեն ժառանգության իրավունքով պատկանող Ա. Իսահակյան 22 հասցեում գտնվող բնակելի տունը, ավտոտնակը, ծածկը, թոնրատունը, սանհանգույցը, կաթսայատունը և անասնաշենքը օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք- շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և ղեկավարվելով ՀՀ«Տեղական ինքնակառավարման մասին» օրենք2-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերըչպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » ՀՀ օրենքով

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինական ճանաչել ժառանգության իրավունքով Անուշավան Սարգսյանին պատկանող Ա. Իսահակյան 22 հասցեում գտնվող բնակելի տունը / 1-ին հարկ՝ 85.7քմ, 2-րդ հարկ՝ 91.1 քմ/, ավտոտնակը/20.1քմ/, ծածկը/17.6քմ/, թոնրատունը/8.8քմ/, սանհանգույցը/7.3քմ/, կաթսայատունը 3.7քմ/և անասնաշենքը /22քմ/:
1. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը չին սահմանվում:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ Ա. Իսահակյան 22:
3. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրերի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Գեղակերտ Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<10>> հունվարի 2017թ. N1Ա

## ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՐԱՖԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի երրորդ մասով

Կարգադրում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի համայնքապետարանի աշխատակազմի 2017թվականի արձակուրդի գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2017թվական հունվարի 10
գ. Գեղակերտ

Հավելված հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական
համայնքի ղեկավարի 2017թվականի
հունվարի10-ի թիվ1Ա կարգադրությամբ

ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՐԱՖԻԿ

| հ/հ | Ազգանուն, անուն | Պաշտոնը | ամիսը |
|---|---|---|---|
| 1. | Առաքելյան Սերյոժա | Համայնքի ղեկավար | նոյեմբեր |
| 2. | Պետրոսյան Նելլի | Համայնքի ղեկավարի տեղակալ | մայիս |
| 3. | Հարությունյան Նատալյա | Աշխատակազմի քարտուղար | սեպտեմբեր |
| 4. | Գալստյան Սուսաննա | Առաջատար մասնագետ | հունիս |
| 5. | Զաքարյան Դավիթ | Առաջատար մասնագետ | օգոստոս |
| 6. | Թովմասյան Լարիսա | 1-ին կարգի մասնագետ | սեպտեմբեր |
| 7. | Ամիրխանյան Ջավահիր | 2-րդ կարգի մասնագետ | հուլիս |
| 8 | Գալստյան Անժելա | 2-րդ կարգի մասնագետ | մայիս |
| 9 | Առաքելյան Անդրանիկ | մեխանիզատոր | հոկտեմբեր |
| 10 | Կնյազյան Ռոբերտ | Աղբահավաք տրանսպորտային միջոցի վարորդ | հուլիս |
| 11 | Ստեփանյան Իշխան | Պահակ | ապրիլ |
| 12 | Կյուրեղյան Արաքսյա | հավաքարար | մայիս |